

2495



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«03» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 053 - 25

Նախաձեռնող՝

«Շամախյան» ՍՊԸ

Տավուշի մարզ, ք. Դիլիջան Շամախյան 2/1

Գործունեությունը՝

**Դիլիջան բնակավայրում Ե. Շամախյան փողոց 3/2
հասցեում բնակելի շենքի կառուցում**

Տավուշի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 053 - 25

«03» Տարբերի 2025թ.

Դիլիջան բնակավայրի Ե. Շամախյան փողոց 3/2 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Շամախյան» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք, Դիլիջան բնակավայր

Ներածական մաս. «Շամախյան» ՍՊԸ-ն նախատեսում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքում Ե. Շամախյան փողոց 3/2 հասցեում բնակելի շենքի կառուցման աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «գ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N06112023-11-0014 վկայականը, Դիլիջանի համայնքապետարանի կողմից տրված NU1-184 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հողամասի կադաստրային ծածկագիրն է՝ 11-003-0040-0387, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:



Նկարագրական մաս. Նախատեսվող շենքը գտնվում է Տավուշի մարզի Դիլիջան համայնքում՝ Ե. Շամախյան փողոցի 3/2 հասցեում, նախկին հացի գործարանի տարածքում:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Գուգարաց լեռնաշղթայի Հալաբ լեռան ծայր հարավային լանջում և հարում է Աղստև գետի ձախ, բարձր դարատափին:

Գործունեության տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են հրաբխածին և նստվածքային ապարները, տարածքի բացարձակ բարձրությունը գտնվում է 1370մ.-ի սահմաններում:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ գործունեության ենթակա տարածքում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել, չկան բնության և պատմամշակութային հուշարձաններ, բացակայում է ծառաթուփային բուսականությունը, Կարմիր գրքերում գրանցված կենդանատեսակներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեության տարածքում շինարարության և շահագործման վրա ազդող երկրաբանական պրոցեսներ (սողանք, կարստ, փլուզում և այլն) չկան:

Նախատեսվում է կառուցել 6 վերգետնյա և 1 ստորգետնյա հարկերից բաղկացած բնակելի շենք, որի նկուղային հարկում նախատեսվում է ավտոկայանատեղի՝ 20 մեքենայի համար և բացօդյա ավտոկայանատեղի ևս 6 մեքենայի համար, ընդհանուր կայանատեղիների քանակը դարձնելով 26 մեքենայի համար: Ավտոկայանատեղիներում նախատեսվում է ավտոմատ հրդեհաշիջման համակարգ: Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների պահանջներին համաձայն շենքի ստորգետնյա հարկերը կլինեն երկակի նշանակության՝ որպես ավտոկայանատեղի, իսկ անհրաժեշտության դեպքում որպես պարզագույն թաքստոց, որտեղ նախատեսված է մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տարածքը ապահովված կլինի օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Շենքում նախատեսվում է 66 բնակարաններ՝ առաջին հարկում՝ 11, երկրորդ և երրորդ հարկերում՝ 13, չորրորդ և հինգերորդ հարկերում՝ 12, վեցերորդ հարկում՝ 5 բնակարաններ: Շենքի առաջին հարկում նախատեսվում է երկու գլխավոր մուտք, երկու աստիճանավանդակ, երկու էվակուացիոն ելքի համար նախատեսված դռներ:

Բնակելի շենքի տարածքի շուրջ նախատեսված են հրշեջ-մեքենայի մուտեցման ճանապարհներ՝ կառույցի բոլոր բնակարաններին սպասարկման հնարավորությամբ:

Նախատեսվող շենքը Շամախյան 1/2 հասցեում գտնվող «ALLUR» բնակելի համալիրի մաս հանդիսանալու արդյունքում՝ վերջինիս համար նախատեսված ավտոկայանատեղիներ, հանգստի գոտիներ, խաղահրապարակներ, մարզահրապարակներ կարող են օգտագործվել նախատեսվող բնակելի շենքի բնակիչների կողմից: Նախատեսվող գործունեության տարածքում քանդման ենթակա շինություններ չկան:

Նախատեսվող բնակելի շենքի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողի մակերես՝ 4289,54 քմ,
- կառուցապատման մակերես՝ 981,8 քմ, 22,9 %,
- կանաչապատման մակերես՝ 1841,34 քմ, 42,9 %,
- մայթ, ճանապարհ, ճեմուղի՝ 1466,4 քմ, 34,2 %,
- ստորգետնյա մակերեսը՝ 941 քմ,
- ավտոկայանատեղի՝ 26 հատ:



Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ՝ թեքահարթակներ:

Բնակելի շենքի էներգախնայողության և էներգաարդյունավետության համար նախատեսվում է իրականացնել՝ երեսպատման համակարգ, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում և այլն:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Բլդանի մաքրման կայանից, ջրահեռացումը կիրականացվի միանալով տարածքի մոտ գտնվող կոյուղատարին:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի՝ կառուցվող երկտրանսֆորմատորային ՏԵ-ից:

Գործունեության ընթացքում շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի ավտոցիստեռներով՝ պայմանագրային հիմունքներով, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, որոնց սպասարկումը կիրականացվի բիոզուգարանները մատակարարող ընկերության կողմից:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է:

Նախատեսվող գործունեության ընթացքում կիրականացվեն հիմքերի փորման աշխատանքներ՝ Ե/բ հիմքերի տեղադրման համար կիրականացվի մոտ 22000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր, 18500 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Դիլիջանիի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցությունները կապված կլինեն փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ, աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն արտանետումների հետ, որոնք են հիմքերի փորման ընթացքում



առաջացող փոշին և շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ վառելիքի արտանետումները (CO, NOx):

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում՝ ավազ, խիճ, հող և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի ժամանակավոր պահեստների ծածկում համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը հնարավորինս կկանխարգելի փոշու տարածումը,
- շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասի ծածկում անթափանց թաղանթով,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկվում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- հոսքաջրերի հեռացում պարզարան, մեխանիկական նստեցում, նստվածքի հեռացում,
- շինարարական նյութերի բետոնապատ մակերեսի վրա տեղադրում,
- շինարարական գործընթացներում շինարարական տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործում և այլն:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Նախատեսվում է աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում, առաջացած շինարարական թափոնների տեղափում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շաղախը և բետոնը կառաքվեն Դիլիջան բնակավայրի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածություն չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցմանը ու կանխարգելմանը:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների (հրդեհի առաջացում, հեղուկ նյութերի արտահոսք, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն), այդ թվում նաև աղմուկի և թրթռումների հնարավոր ազդեցության բացառման, նվազեցման, կենսաբազմազանության պահպանման համար ևս նախատեսվում են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք նկարագրված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը 5.8 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյնիներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 280 խմ շինարարական աղբը, որը



կտեղափոխվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող 18500 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր: Շահագործման փուլում տրանսֆորմատորային ենթակայանում առաջացող հատկությունը կորցրած բանեցված յուղեր, որոնք կհավաքվեն մետաղյա տարողությունների մեջ և կհանձնվեն նշված թափոնների վերամշակմամբ զբաղվող ընկերություններին:

Հնարավոր վթարների ժամանակ յուղի արտահոսքը կանխելու նպատակով բետոնյա հարթակը կունենա որոշակի թեքությամբ հատված, որտեղ էլ կկուտակվի յուղը, կհավաքվի սորբենտով և կպահվի մետաղյա տարողության մեջ, հետագայում կտրամադրվի վերամշակող ընկերության:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշման համապատասխան: Կանաչապատումը կիրականացվի համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Դիլիջանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ բուսահողը մոտ 200 խմ. ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Դիլիջանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից՝ կաթիլային եղանակով:

Նախատեսված բնապահպանական բոլոր միջոցառումները ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցության կանխարգելմանն, մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
2. տարածքի ջրցանում՝ փոշենստեցման նպատակով տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
4. աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ: Նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով,
5. հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Շինարարության ընթացքում մշտադիտարկումների և բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է հատկացնել 1440000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանրային ծանուցումը և լուումներն իրականացվել են Տավուշի մարզի Դիլիջանի համայնքի ղեկավարի նստավայրում:

Հանրային լուումների ժամանակ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Գնահատման հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ արող զապահովության, ներքին



գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ամփոփելով գնահատման հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
3. Բնակելի շենքի համար նախատեսվող ջրագծի տարածքները հատուկ պահպանվող կամ անտառային տարածքների հետ համընկնելու դեպքում, անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N 638 - Ն որոշման պահանջներով:
4. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
5. Կանաչապատումն անհրաժեշտ է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Դիլիջանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծի:
6. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
7. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման



պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Շամախյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան բնակավայրի Ե. Շամախյան փողոց 3/2 հասցեում նախատեսվող բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նախիբյան